

Մեր բոլը հաւատարիմ հպատակներին ազակցել Մեզ ընտանիքին, ուսումնարանին և հասարակական կեանքի մեջ հաստատելու բարոյական հիմունքները, որոնցով միայն, Միահնեան իշխանութեան հովանու տակ, կարող են զարգանալ ժողովրդի բարօրութիւնը և իւրաքանչւրի վստահութիւնն իր իրաւունքների ամրութեան վերաբերութեամբ, Մենք հրամայում ենք Մեր՝ մինիստրներին և առանձին մասերի զիթաւոր կառավարիչներին, որոնց իրաւասութեանը վերաբերում է այս, ներկայացնել Մեզ իրանց գիտողութիւնները Մեր ծրագրների կատարման կարգի մասին, Տէր Նմենսակալը թող օրհնէ Մեր Սրբայական աշխատանքը և թող օգնէ Նայ Մեզ, Հայրենիքի ըուրա հաւատարիմ զաւակների սերտ միութեամբ, կատարել Մեր մտադրութիւնները պետական կարգը կատարելագործելու վերաբերութեամբ, սահմաննելով տեղական կեանքի հաստատոն կապ, իրրե զիթաւոր պայման Մեր Պետութիւնը ծաղկեցնելու հաւատել, օրէնքի և իշխանութեան ամուր հիմքերի վրայ:

— Տրուած է Պետերբուրգում փետրուարի 26-րդ օրը, Քրիստոսի ծննդեան հազար ինն հարիսր երեքերորդ տարում, իսկ Մեր Թագաւորութեան իններորդ տարում:

Խոկականի գրայ նորին Կայսերական Մեծութեան Սեպհական ձեռքով ստորագրուած է

ՆԻԿՈԼԱՅ

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԾԻ Ի ՄԵՌԵԼՈՅ,

Սրդարութեան և սիրոյ յաղթանակի այս մեծ Տօնը ամեն մի քրիստոնեանի հաւատու և ամրացնում, յոյսն աւելացնում և սէր ներշնչում:

Բնութիւնը զարթելով ձմերային մեռելութիւնից մարդու կային հոգու վրայ ազգում է այն աստիճան, որ նա ուզում է հոգեպէս նորոգուել լոյս և փնտրում և այդ լուսոյ մեջ ուզում է արտացոլացնել իւր կենսունակութիւնն ու գործունէութիւնն նուիրուած բարւոյ, բարոյականութեան և արդարութեան...

Եթէ անցեալի օրինակը ցոյց է տալիս մեզ, որ մեր յշու սերն երբեմն և չեն իրականանում, բայց և այնպէս հաւատ դէպի յշուը, նորածնուելու իղձն և ապագայ կեանքում արդարութիւն և ճշմարտութիւն որոնելու ցանկութիւնն է, որ յարութիւն առնելով մեր սրտերում՝ մարդկային հոգւոյ ամենագերագոյն հարստութիւնն է պարզեւում մեզ:

Որքան առատ է մեր սրտերում այդ հարստութիւնը, այն-

քան մեր աչքերում վեհ է երեսում այն ծօնը, որ յիշեցնում է մեզ Աստուած-Որդւոյ Յարութիւնը, որի առաջ համայն մարդկութիւնը հաւասար է, ամենքը եղբարը են և ամենքը արժանի են նորա Սիրոյն, Որի վարդապետութիւնը սովորեցնում է մեզ ձեւ միայն յարգել ուրիշի անձնաւորութիւնն, այլ սիրել միմեանց՝ սիրել թշնամուն այնպէս, ինչպէս քեզ ես սիրում:

Քրիստոսի սիրոյ աշա այդ պատուէրն է, որ Հարկադրում է մեզ մի բոպէ մոռանալ անհական ատելութիւնն և ձեռք ձեռքի տուած ապրել միենոյն սիրով և ցանկութեամբ, միենոյն ոյսով և նպատակով... Սիրոյ վարդապետութեան այդ բարեմատութիւններն են, որ պահասում են մեզ՝ բոլոր ազգերիս և առանձին հայերիս, որ լինելով մի չնչին ամբողջութիւն, աւելի մենք ենք կարու կեանքի այդ կարեոր գործօններին, բարութեան այդ պատուական միջոցներին:

Մինչև որ Քրիստոսի այդ վարդապետութեան դաշտափառը չը պիտի լինի ազգերի փոխադարձ յարաբերութիւնների հիմքը, մինչեւ որ այդ չը պիտի լինի նրանց դործունէութեան առաջնորդը, — նրանց մեջ չպիտի տիրէ իսաղաղութիւն, որով հետեւ կեանքը կմայ միենոյնը, գյուլթիւն կունենան դարձեալ ճնշողն և ճնշուողը, յաղթողն և յաղթուողը, կուշտն և բաղցածը. — Մի խօսքով կման նոյն պայմաններն, որոնք առաջ են բերում փոխադարձ ատելութիւն, սոոր միջոցներ առաջաւոր լինելու և ճարաշասեալ աշխատանք՝ անարգուած մարդկային պատիւր վերականգնելու համար:

Ժամանակակից կեանքը մեզ տալիս է այդ մրցման բազ: մաթիւ օրինակներ, պատկերներ՝ մարդկային արիւնով, արտասուրով և տանջանքներով լցուած և զոհերի անհաշւելի թիւ.

Ուզում ենք հաւատալ, որ եթէ ոչ մենք, գոնէ մեր ապագայ սերունդը հնարաւորութիւն կունենայ տեսնել մարդկութեան միմեանց հետ ունեցած այդ դարաւոր ատելութեան վախճանը՝ — Քրիստոսի վարդապետութեան դարափարի ցնծալի՝ յաղթանակը. Եւ աշա այդ իսկ պատճառով քրիստոնէութեան այս Մեծծօնի ամեն մինոր իշողութիւն մի անգին դանձ է մարդկային արտի համար, մի լուսաւոր ճառագայթ է, որ մեզ նոր ոյժ, նոր քաջալերութիւն է տալիս մեր փշոտ ճանապարհը մաքրելու և մեր ապագայ սերնդի համար պատուատել այն հոլը, որի վրայ ցանկանում ենք ամուր կանգնած տեսնել նրան:

Սիրոյ յաղթանակը թող կարթեցնէ մեր սրտերը, թող վսեմացնէ մեր կոշտ զգացմունքները, թող մոռացնէ ազգերի փոխադարձ յարաբերութիւնը պղտորող ցած դիտումները և կեանքի մեռելութիւնից յարութիւն առնելով՝ դիմենք միասին յառաջ դէպի լոյս՝ դէպի եղբայրսիրութիւն... և մարուր սրտով միմեանց շնորհաւորելիս, պատասխաններ՝

ոՕրհնեալ է Յարութիւն Քրիստոսի»:

Կուկաս Քեմեչեձեան

Մոսկովա 6 Ապրիլի.

1903